ՔԱՂՎԱԾՔ

Բարձրագույն դատական խորհրդի 05.12.2022թ. նիստի արձանագրությունից

Օրակարգի հարց 4. **«Բարձրագույն դատական խորհրդի և Հայաստանի Հանրապետության դատարանների պահուստային ֆոնդից գումար հատկացնելու և Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի հունվարի 7-ի թիվ ԲԴԽ-2-Ո-2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Բարձրագույն դատական խորհրդի որոշման նախագծի քննարկում.**

Նախագահը Խորհրդին հայտնեց, որ առաջացած մի շարք ֆինանսական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել Խորհրդի և դատարանների 2022 թվականի ծախսերի նախահաշիվների փոփոխություններ:

Օրակարգային հարցի շրջանակներում Նախագահը նշեց, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1.1 -րդ կետի, հարցազրույցից առաջ հինգ օրվա ընթացքում հավակնորդները անցնում են հոգեբանական թեստավորում:

Խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-89-ԱՈ-22, նոյեմբերի 14-ի թիվ ԲԴԽ-108-ԱՈ-32 որոշումներով դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հոգեբանական թեստավորման գործընթացին մասնակցելու, հոգեբանական հատկանիշների գնահատում իրականացնելու և հարցազրույցի փուլին մասնակցելու նպատակով ընտրվել են հոգեբաններ Արթուր Կոբելյանը, Գագիկ Պետրոսյանը, Լիլիթ Կարապետյանը և Լիլիթ Բաղդասարյանը:

Նախագահը ներկայացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալ հոգեբաններ Արթուր Կոբելյանի, Գագիկ Պետրոսյանի, Լիլիթ Կարապետյանի և Լիլիթ Բաղդասարյանի վարձատրության հարցին:

Խորհրդում քննարկում իրականացվեց հոգեբաններ Արթուր Կոբելյանի, Գագիկ Պետրոսյանի, Լիլիթ Կարապետյանի և Լիլիթ Բաղդասարյանի վարձատրության հարցի վերաբերյալ:

Նախագահ. «Առաջարկում եմ քվեարկել»:

Քվեարկեցին՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Քննարկման արդյունքում **խորհուրդն արձանագրային որոշում կայացրեց** *հոգեբաններ Արթուր Կոբելյանին և Գագիկ Պետրոսյանին յուրաքանչյուր դատավորի թեկնածուի հավակնորդի համար վճարել 9375-ական ՀՀ դրամ գումար, իսկ հոգեբաններ Լիլիթ Կարապետյանին և Լիլիթ Բաղդասարյանին յուրաքանչյուր դատավորի թեկնածուի հավակնորդի համար վճարել 6250-ական ՀՀ դրամ գումար:*

Խորհուրդը որոշեց՝ *Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի հունվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2022 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-2-Ո-2 որոշման 1-ին կետի 1-ին և 19-րդ ենթակետերով հաստատված 1-ին և 22-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:*

Իրավական ակտերի մշակման և փորձաքննության
վարչության ԲԴԽ նիստերի նախապատրաստման
և որոշումների նախագծերի մշակման
բաժնի պետ՝

Ա. Թումասյան

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻՑ

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Հարգելի՛ պարոն Գալստյան,

2022 թվականի հունվարի 31-ի թիվ ԲԴԽ-11-ԱՈ-4 որոշմամբ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հոգեբանական թեստավորման գործընթացին մասնակցելու, հոգեբանական հատկանիշների գնահատում իրականացնելու և հարցազրույցի փուլին մասնակցելու նպատակով **ընտրվել են հոգեբաններ Արթուր Կոբելյանը և Գագիկ Պետրոսյանը**:

2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-89-ԱՈ-22 որոշմամբ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հոգեբանական թեստավորման գործընթացին մասնակցելու, հոգեբանական հատկանիշների գնահատում իրականացնելու և հարցազրույցի փուլին մասնակցելու նպատակով **ընտրված հոգեբաններ Արթուր Կոբելյանից և Գագիկ Պետրոսյանից** բացի 2022 թվականի օգոստոսի 29-ի թիվ ԲԴԽ-82-ԱՈ-17 որոշմամբ **ընտրվել է նաև հոգեբան Լիլիթ Կարապետյանը**:

2022 թվականի նոյեմբերի 14-ի թիվ ԲԴԽ-108-ԱՈ-32 որոշմամբ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հոգեբանական թեստավորման գործընթացին մասնակցելու, հոգեբանական հատկանիշների գնահատում իրականացնելու և հարցազրույցի փուլին մասնակցելու նպատակով **ընտրվել են հոգեբաններ Լիլիթ Կարապետյանը և Լիլիթ Բաղդասարյանը**:

2022 թվականի օգոստոսի 1-ին, սեպտեմբերի 22-ին և 23-ին հոգեբանական թեստավորման են մասնակցել դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված **46** դատավորի թեկնածուի հավակնորդներ:

2022 թվականի օգոստոսի 5-ին, սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին Բարձրագույն դատական խորհրդում տեղի է ունեցել թվով **46** դատավորի թեկնածուի հավակնորդների հարցազրույցը:

Հոգեբաններ Արթուր Կոբելյանի և Գագիկ Պետրոսյանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 29-ին ներկայացվել էր դիմում՝ խնդրելով յուրաքանչյուրին վճարել 478.400 (չորս հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար, այսինքն՝ յուրաքանչյուր թեկնածուի համար յուրաքանչյուրին վճարել 10400 (տաս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար:

Գ-189-25

2022 թվականի օգոստոսի 29-ի թիվ ԲԴԽ-82-ԱՈ-17 որոշմամբ ընտրված հոգեբան Լիլիթ Կարապետյանը մասանկցել է 2022 թվականի սեպտեմբերի 22-ին և 23-ին հոգեբանական թեստավորմանը և 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին Բարձրագույն դատական խորհրդում տեղի է ունեցած հարցազրույցներին: Նշված գործընթացին մասնակցել են 41 դատավորի թեկնածուի հավակնորդներ:

Հոգեբան Լիլիթ Կարապետյանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 18-ին ներկայացվել է դիմում՝ խնդրելով յուրաքանչյուր թեկնածուի համար վճարել 8725 (ութ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ գումար:

2022 թվականի նոյեմբերի 18-ին և նոյեմբերի 21-ին հոգեբանական թեստավորման և հարցազրույցի փուլի են մասնակցել դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված 10 դատավորի թեկնածուի հավակնորդներ:

Հոգեբաններ Լիլիթ Կարապետյանի և Լիլիթ Բաղդասարյանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 21-ին ներկայացվել է դիմում՝ խնդրելով յուրաքանչյուր թեկնածուի համար յուրաքանչյուրին վճարել 8725 (ութ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր համապատասխան հանձնարարականը:

Հ/Հ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՇՎԵՀԱՄԱՐ
1.	Արթուր Կոբելյան	220563329055000 «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ»
2.	Գագիկ Պետրոսյան	001120732001 «Էյչ- էս-բի-սի բանկ Հայաստան»
3.	Լիլիթ Կարապետյան	11817047087600 «Այ-Դի բանկ»
4.	Լիլիթ Բաղդասարյան	1510011269530100 «Արարատ բանկ»

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**

02.12.2022թ.

Ա. Կոբելյան — 9345×46 = 429870
Ջ. Սիրբրյան — 9345×46 = [illegible]
Ժ. Գագիկյան — 6250×41 = 256250
Ժ. Կարապետյան — 6250×10 = 62500
Ժ. Բաղդասարյան — 6250×10 = 62500

1203620